

«Բառով, հազար բարի,
 Իմ սիրած բլրուլ,
 Իմ սիրած բլրուլ.
 Բերե՛լ աս թաղայ նուշ՝
 Բար ինձի համար»:

Ծոցիդ ուհան զոնջայ
 Վարդն ա բացվել,
 Վարդն ա բացվել.
 Իմ եարի թամաշն՝
 Բեր ինձի համար»:

Կամ՝

«Եա՛ր, դու կընձանին
 Վարար գետերի,
 Վարար գետերի.
 Դուրբան ծով-ծով աչքին՝
 Յունքիդ նետերին»:

Աջող վրձինով նկարուած մի պատկեր է նաեւ «Մի՛ լար, մի՛ լար» սիրերգը, որ հիւսուած է ժողովրդական մօտիւով.

«Մնձոր ծառին հետ կախած ա,
 Վեր ա ընկէլ, տրորած ա,
 Քո սիրողն մորթած ա:
 Մի՛ լար, մի՛ լար,
 Ես գորման ամ.
 Նազ մի՛ անիր,
 Ես մեռման ամ:
 Խնձոր ծառին կարմիր-ձերմակ,
 Քեզ տեսնողն է արեգակ,
 Ծրագ ձեռին որպէս լուսնեակ»:

2. Հարսանեկան երգեր:

Ձուղահայ եւ Հնդկահայ բանահիւտութեան մէջ կան նաեւ մի քանի հարսանեկան երգեր, որոնց թուում է «Արդ հրամանաւ»ը: Դա գրաբարախառն մի երգ է, որի մէջ պատկերացում է նորահարսի հոգեկան աշխարհը եւ զգացումները: Այդ երգը հեղինակել է եւ ձայնագրել Նոր-Ձուղայեցի Տէր-Գրիգոր Տէր-Յովսէփեանը 1830 թուին եւ մինչեւ օրս էլ, 100 տարուց յետոյ, երգւում է Նոր-Ձուղայի հարսանիքներում, երբ հարսը հրաժեշտ է տալիս հայրական տանը: Ո՞ր Ձուղահայն անգիր չգիտէ կամ չի երգել այդ գողարիկ երգը⁴: Ահա մի՛ նմուշ.

«Օրհնեա՛ դուստր քո, իմ անգին մայր,
 Որ շատ երկամբ դու գիտ ծնար.
 Եւ հոգ տարար ինձ մայրաբար,
 Մնա՛ս բարեաւ, ես գնացի,
 Ծատ խնդացի եւ շատ լացի»:

Հարսանեկան աջող մի նկար է նաեւ «Եա՛ր լարին»: Դա Ձուղահայ ժողովրդական միակ ինքնուրոյն երգն է, որ Նոր-Ձուղայի

⁴ Երգում են «Տարածեալ» շարականի եղանակով:

հարսանիքներում ջահէլ աղջիկները, հարսները, կանայք եւ երիտասարդները մեծ շրջան բռնած, գուռնայի եւ թմբուկի նուագածութեան տակ, երգում են եւ պարում, երբ փեսային «կարմիր-կանաչ» են կապում եւ հարսին զարդարում: «Կարմիր-կանաչը» ոսկէ թելով նախած (դառ) մի դոյզ լայն ժապաւէններ են, որ փեսայի կրծքին խաչածեւ կապում են, կարմիրը՝ փեսայէնց տնում, իսկ կանաչը՝ հարսէնց տնում: Ահա երկու տուն ժողովրդական այդ երգերը.

«Ե՛ա՛լարի, յունքէրդ ա թաղ տուած,
 Եա՛լարի, սրտիս մէջն դաղ տուած.
 Եա՛լարի, աչքէր ունիս ջէյրանի,
 Եա՛լարի, տեսնողի խելքն տանի»:

Եա՛լարի, երբոր իշարաթ կանես,
 Եա՛լարի, սրտիս մէջը կըզաղես.
 Եա՛լարի, յուշս գիւնէս կը տանես,
 Եա՛լարի, սաղ-սաղ ինձ կը սպանես»:

3. Միւս երգերը:

Բացի յիշեալ երգերից՝ մեր ձեռքը հասել են նաեւ մի քանի երգիծական կտորներ, որոնց մէջ գծուած են ժամանակակից «վարձկան» բժիշկների եւ տգէտ հոգեւորականների պատկերը: Կան նաեւ մի քանի գովասանական երգեր նուիրուած «ղայլանին» եւ «նաչխին», զանգատ «ղալում» մկներից եւ նրանց ձագերից, այլ եւ մի քանի խրատական եւ նկարագրական երգեր: Հետաքրքրական է սակայն «Որատի ձեւ նկարագրութիւնը», որի վերջին մասում հայրը որդուն սէր է ներշնչում գէպի տպարանն եւ գրիչը եւ յորդորում է միշտ բարեկամ մնալ նրանց: Ի միջի այլոց տալիս է նաեւ Հնդկաստանի նշանաւոր քաղաքների նկարագրութիւնը.

«Բոմբայի հայոց համալսարան է,
 Հզոր գրաւոր որդիք սա ունէ.
 Մազրաս մեր ազգի ուսումնարանն է,
 Ազգասէր որդիք նա բազում ունէ.
 Կալիպթա մեծ ա, յատկացեալ բան չկայ,
 Ամենայն տեսակ դաւակ իւրնում կայ»:

Ահա այն ժողովրդական երգերը, որոնք հասել են մեզ: Ընդէս է, որ նրանք հատկապէս են, բայց բերուած օրինակներն էլ բաւական են ցոյց տալու համար ժամանակակից Նոր-Ձուղայի եւ Հնդկաստանի հայ ժողովրդի ստեղծագործութեան չափն ու ոգին:

1916-1929 թ. ԱՐԱՄ ԵՐԵՄՅԱՆ
 Նոր-Ձուղայ-Երեւան:



ՆՈՒՆՆԵՐ ՂԱՐՐԱՅԻՆ ԲԵՐՐԱԹՈՎ

Հաւաքեց*
 ԿՈՍՏԱՆԴՆՈՍ Կ. ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆՑ

Ղարաբաղի լեզուի մի քանի յատկութիւնները:

1. Ղարաբաղի լեզուի հնչիւններից մի քանիսը մենք երկու — երեք տառերով նշանակեցինք շատ տեղ, իսկական նշանադիրը չունենալու համար. ինչպէս ոչ — վըէ, որ — վըէր, տես — տըէս, կէս — կըէս եւ այլն:
2. Տառերը պէտք է հնչել, ինչպէս Ռուսաց այբուբենի տառերը այսինքն ա = а, բ = в, գ = г, դ = д, վ = в եւ այլն: ա, տառը թուրքերէն բառերի մէջ պէտք է ալիֆի պէս հնչել եւ ոչ բաց ա. օր. ա՛սման, քեօջա՛րի դըվա՛զա՛, թեա՛փա՛, բէյա՛զա՛թ եւ այլն:
3. Բառերի սկիզբը եւ մէջը ու ձայնը շատ տեղ փոխվում է օ-ի օր. թուխալ — թօխուլ, ուղա — օղա, սուր — սօր, թուր — թօր, նուս — նօսնը, Շուշուլայ — Շօշուլայ, ուտել — օտել, ուղել — օղել, ուտիլ — օտիլ, ուրախ — օրախ եւ այլն:
4. օ եւ ո փոխվում են ու-ի. օր. ա-մօթ — համութ, օրօրոց — ուրուրուց, թուրն — թուրուն, մեռուն — մեռուն, կոկոն — կուկուն, մածոն — մածուն եւ այլն:
5. այ փոխվում է պարսկական ալիֆայի եւ է-ի, օր. հայր — հեար, մայր — մեար, եղբայր — ախպէր, այս — էս, այդ — էդ, այն — էն, այժ — էժ, այրել — էրել եւ այլն:
6. ո բառերի սկիզբում փոխվում է վրէ. օր. ոչխար — վըէխար, ոտ — վէնը, որ — վըէրթի, ոսկի — վըէսկի, ոտայն — վըէստան, որսորդ — վըէրսական եւ այլն:

Հարվումն գոյական անուանց:

7. Անունները ըստ մեծի մասին հետեւեալ ձևով են հորովում:

	Միավանկեր		Բազմավանկեր	
	Եզակի	Յոճնակի	Եզակի	Յոճնակի
Ուղ.	Ծառ	Ծառեր	Կարաս	Կըրընէ
Սևո.	Ծառի	Ծըռերի	Կըրասի	Կըրընբի
Գործ.	Ծառաւ	Ծըռերաւ	Կըրասաւ	Կըրընբաւ
Տը.	Ծառին	Ծըռերին	Կըրասին	Կըրընբին
Հայց.	Ծառը	Ծառերը	Կըրասը	Կըրընբնէ
Բաց.	Ծառան	Ծըռերան	Կըրասան	Կըրընբան
Ներք.	Ծառըմ	Ծըռերըմ	Կըրասըմ	Կըրընբըմ

8. Վերագրեալ պատկերից երեւում է, որ եզականը յօքնականի դարձնելու համար, եթէ բառը միավանկ է, աւելացնում ենք եր, եթէ բազմավանկ է՝ նէ, միայն ուղղական եթէ բազմավանկ է՝ նէ, միայն ուղղական եւ հայցական հորովներում, իսկ մնական եւ հայցական հորովներում վերջանում է ցածի մէջ ներ: Գործիականը վերջանում է աւ, բացառականը՝ ան, ներգոյականը ըմ: 9. Ի վերջացած գոյական անունների լու, ծիւլ, ծիւլու, թիւլի, թիւլու եւ այլն: 10. Դերանունաց մէջ բացառականը վերջանում է անա, մըղանա = մեղանից, ծըղանա, քըղանա, ինձանա եւ այլն:

Բայերի խոնարհումն:

	Ներգոյ			
	Եզակի	Յոճնակի	Յոճնակի	Յոճնակի
1. Օտըմ ըմ	Կարըմ ըմ	Օտըմ ըմ	Կարըմ ըմ	Կարըմ ըմ
2. Օտըմ ըս	Կարըմ ըս	Օտըմ ըս	Կարըմ ըս	Կարըմ ըս
3. Օտըմ ա	Կարըմ ա	Օտըմ ա	Կարըմ ա	Կարըմ ա

	ԱՆՅԵԱԼ ԱՆԿԱՏԱՐ			
	Եզակի	Յոճնակի	Յոճնակի	Յոճնակի
1. Օտըմ ի	Կարըմ ի	Օտըմ ինք	Կարըմ ինք	Կարըմ ինք
2. Օտըմ իր	Կարըմ իր	Օտըմ իք	Կարըմ իք	Կարըմ իք
3. Օտըմ ար	Կարըմ ար	Օտըմ ին	Կարըմ ին	Կարըմ ին

	ԱՆՅԵԱԼ ԿԱՏԱՐԵԱԼ			
	Եզակի	Յոճնակի	Յոճնակի	Յոճնակի
1. Կըէրի	Կարեցի	Կըէրինք	Կարեցինք	Կարեցինք
2. Կըէրի	Կարեցի	Կըէրեք	Կարեցեք	Կարեցեք
3. Կըէրաւ	Կարեց	Կըէրին	Կարեցին	Կարեցին

	ԱՊԱՌՆԻ			
	Եզակի	Յոճնակի	Յոճնակի	Յոճնակի
1. Կօտիմ	Կըկտրիմ	Կօտինք	Կըկտրինք	Կըկտրինք
2. Կօտիս	Կըկտրիս	Կօտիք	Կըկտրեք	Կըկտրեք
3. Կօտի	Կըկտրի	Կօտին	Կըկտրին	Կըկտրին

	ԱՊԱՌՆՈՒ ՁԵՒՆԵՐ			
	Եզակի	Յոճնակի	Յոճնակի	Յոճնակի
1. Կօտիմ	Կըկտրիմ	Կօտինք	Կըկտրինք	Կըկտրինք
2. Կօտիս	Կըկտրիս	Կօտիք	Կըկտրեք	Կըկտրեք
3. Կօտի	Կըկտրի	Կօտին	Կըկտրին	Կըկտրին

* Հաւաքուած յոյս ուղարկած է մեզ ԶՈՒՆՈՍ Տ մ ք լ ա գրքին բազմավաստակ եւ յոյսեալ հեղինակը՝ ՏՄԲԼԱՍԻ ԽԱՉԱՆ, որ ըլլալով բնիկ Ղարաբաղցի՝ քաջ ծանօթ է տեղւոյն բարբառին եւ տարբերութիւններուն: Կը հրատարակեմք այս Առակները վերաբիւններուն: Կը հրատարակեմք ի Բառագիրքը Հանելուկներ, Սովորութիւններն եւ Բառագիրքը Երբեք հում նիւթեր հայ բարբառագիրութեան եւ ազգագրութեան անդրազոյն ուսումնասիրութեանց ի նպաստ:

Յառաջարկական մասը, որ լոյս է տեսած ԶՈՒՆՈՍ Տ մ ք լ ա գրքին թ. հատորին մէջ (Էջ 243-246), գետնդուած է հաւաքուած սկիզբը. գաղափար տալու ոչ-մասնագէտներուն բարբառին առանձնայատկութիւններուն մասին:

Խմբագր. «Հանդիպ»: